

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի հաշվետվությունը 2018 թվականին մարզպետարանում կատարված աշխատանքների վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենքներով, ՀՀ Նախագահի հրամանագրով, ՀՀ կառավարության որոշումներով ու իրավական ակտերով՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը 2018 թվականի ընթացքում որոշակի աշխատանքներ է կատարել մարզի կենսագործունեության ապահովման, մարզի առջև ծառացած սոցիալ-տնտեսական հիմնահարցերի լուծման, կյանքի որակի բարելավման ուղղություններում:

Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտում 2017-2018 ուսումնական տարում մարզում գործել են մարզային ենթակայության 89 միջնակարգ, 26 հիմնական, 2 տարրական, 1 հատուկդպրոցներ, իսկ ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության՝ 1 կրթահամալիր և 6 ավագ դպրոցներ, 1 հիմնադրամ:

Համապատասխան ուսումնասիրությունների, վերլուծությունների, համայնքների ղեկավարների, իրավասու կազմակերպությունների հետ համագործակցված աշխատանքի արդյունքում ապահովվել է դպրոցահասակ երեխաների ընդգրկումը ուսումնական հաստատություններ, և ըստ դպրոցների տնօրենների ու համայնքների ղեկավարների կողմից ներկայացված տեղեկատվության, մարզում հանրակրթությունից դուրս են մնացել 13 երեխաներ, որոնց դպրոց վերադարձնելու համար տարվել են բացատրական աշխատանքներ և կիրառվել են վարչական լծակներ:

Առանձնակի ուշադրություն է դարձվել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին դպրոց ընդգրկելու ուղղությամբ, որի արդյունքում շուրջ 280 երեխաներ ապահովվել են հագուստով և գրենական պիտույքներով ու հաճախել են դպրոց: 2018-2019 ուսումնական տարում մարզային ենթակայության դպրոցներում փաստացի կոմպլեկտավորվել է 1481,50 դասարան 27738 աշակերտով: **2017-2018 ուսումնական տարվա ավարտին մարզային ենթակայության 117 դպրոցներում** սովորել են 26753 աշակերտ):

Անհրաժեշտ պայմաններ են ապահովվել հատուկ կրթության կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար: Նկատելիորեն բարելավվել են Գավառի N 1 հատուկ դպրոցում ընդգրկված աշակերտների ուսման, սննդի և գիշերելու խնդիրները: Որոշակի աշխատանք է կատարվել նաև ներառական կրթություն իրականացնող 6 դպրոցներում, որտեղ սովորում են հատուկ կարիքավոր 114 աշակերտ:

2018 թվականի 1-ին կիսամյակի վերջում մարզային ենթակայության դպրոցներում փաստացի սովորող 26753 աշակերտներից գնահատվել են 23853-ը: 2877 առաջին դասարանցիները, գործող կարգի համաձայն, չեն գնահատվել, իսկ 18 աշակերտներ, համապատասխան դպրոցների մանկավարժական խորհուրդների որոշմամբ և ծնողների համաձայնությամբ, մնացել են դասընթացը կրկնելու: Չեն գնահատվել նաև դպրոցների 2-12-րդ դասարանների 22 աշակերտներ, որոնք նույնպես մնացել են դասընթացը կրկնելու: Գնահատված աշակերտներից գերազանցիկներ են՝ 5835-ը (24.4%), հարվածայիններ են՝ 6695-ը (28%), միջակ առաջադիմություն ունեն՝ 11251-ը (47.1%), իսկ 72-ը՝ (0.30 %) ունեն անբավարար գնահատական:

12-րդ դասարան ավարտել և միջնակարգ կրթության ատեստատ են ստացել 624 աշակերտներ, որից 3-ը՝ դրսեկ: 12-րդ դասարանի 1 աշակերտ՝ Ջուլաքարի N1 միջնակարգ դպրոցի շրջանավարտ Ծաղիկ Տոնեյանը պարգևատրվել է «Գերազանցության մեդալով»:

9-րդ դասարանի աշակերտներից ավարտական վկայականներ են ստացել 2429-ը որից 189-ը՝ գերազանցության վկայականներ:

Մարզի դպրոցների աշակերտների միջին առաջադիմությունը կազմում է 99.69 %, որակը՝ 52.53%:

Որոշակի աշխատանք է տարվել դպրոցները մանկավարժական կադրերով համալրելու ուղղությամբ: 2018թ. ընթացքում առաջացած մանկավարժական թափուր տեղերը համալրվել են մրցութային կարգով, և 38 դպրոցներում անցկացված մրցույթների արդյունքում նշանակվել են 44 ուսուցիչներ, իսկ սահմանամերձ մի շարք դպրոցների ուսուցչի թափուր տեղերի զբաղեցման համար դիմորդներ չեն եղել: Տարվա ընթացքում կազմակերպվել են «Լավագույն ուսուցիչ, տնօրեն, դաստիարակ», Հայ առաքելական եկեղեցու և ՀՀ ԿԳՆ համատեղ իրականացվող՝ 5 առարկաների գծով «Տարվա լավագույն ուսուցիչ», «Հայաստանում ռուսաց լեզվի լավագույն ուսուցիչ», «Նախնական զինվորական պատրաստականություն առարկայի լավագույն ուսուցիչ» մրցույթները և ապահովվել հաղթողների տվյալների ներկայացումը ՀՀ կրթության և գիտության նախարարություն: Հանրակրթական հաստատություններում սովորողների ուսուցման գործընթացի անխափան կազմակերպման համար հատուկ ուշադրություն է դարձվել դպրոցական շենքերի շահագործմանը և պահպանմանը: ՀՀ պետական բյուջեի միջոցներով վերանորոգվել են՝ Ջուլաքարի N2 միջնակարգ, Սևանի N1 հիմնական, Ներքին Գետաշենի N1 միջնակարգ, Վերին Գետաշենի N1 միջնակարգ դպրոցների շենքերը, իսկ 14 դպրոցներ իրենց տնտեսված միջոցների հաշվին, կատարել կամ կատարում են վերանորոգման աշխատանքներ: Շարունակում է հիմնախնդիր մնալ վթարային վիճակում գտնվող 3 (Գեղիկավանի N 2 մ/դ, Վ. Գետաշենի N 2 մ/դ, Լիճքի հ/դ) դպրոցական շենքերի հիմնանորոգումը, դպրոցները լաբորատոր սարքավորումներով ու նյութերով ապահովումը (ապահովված են միայն 11 դպրոցներ):

Աշխատանք է տարվել ջեռուցման ապահովման ուղղությամբ, որի արդյունքում հաստատությունները նախընտրած վառելիքով կազմակերպել են շենքերի ջեռուցումը. 71 դպրոց օգտագործել է գազ, 13-ը՝ էլեկտրաէներգիա, 29-ը՝ հեղուկ վառելանյութ, 5-ը՝ վառելիքայտ:

2018 թվականին համայնքային սեփականություն հանդիսացող 9 նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքեր նույնպես հիմնանորոգվել են:

Մարզի 57 համայնքներից 30-ում գործել են 48 մանկապարտեզներ:

2018 թվականին մանկապարտեզներ են բացվել Ծակքար և Վարդաձոր համայնքներում: Գործող 48 մանկապարտեզներից 5-ը գործում է շուրջտարի, իսկ 43-ը՝ սեզոնային: Մարզում գործող 48 նախադպրոցական հաստատությունների 117 խմբերում հաճախում են 3486 երեխաներ:

:ՀՀ ԿԳՆ է ուղարկվել մարզի 24 դպրոցներում ևս նախակրթարաններ հիմնելու վերաբերյալ առաջարկություն: 2018 թվականի դրությամբ լիցենզավորվել են 28 դպրոցահեն նախակրթարաններ և 11 նախադպրոցական ուսումնական հաստատություններ:

Անհրաժեշտ աշխատանքներ են իրականացվում նախակրթարանների և նախադպրոցական ուսումնական հաստատությունների լիցենզավորման գործընթացը ավարտին հասցնելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում մարզում գործել են 1 նախնական մասնագիտական /արհեստագործական/ և 8 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ:

ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցականների 2017-2018 ուստարվա օլիմպիադաների դպրոցական, տարածքային և մարզային փուլերը կազմակերպվել և անցկացվել են ըստ նախատեսված ժամանակացույցերի: Մարզի 125 հանրակրթական դպրոցներից 122 դպրոցների 7503 աշակերտներ 2017թ. դեկտեմբեր- 2018 թվականի փետրվար ամիսներին մասնակցել են ներդպրոցական փուլին: Մարզային փուլին մասնակցելու երաշխավորվել են 592 աշակերտներ: Մարզային փուլի 482 մասնակիցներից հանրապետական փուլին երաշխավորվեցին 71 աշակերտներ: Հանրապետական փուլին մասնակցած 68 աշակերտներից 12-ը ստացել է դիպլոմ, 8-ը՝ գովասանագիր, 2 աշակերտ արժանացել է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում կայանալիք միջազգային օլիմպիադային մասնակցելու իրավունքի, իսկ ՆԶՊ առարկայից մարզի թիմը հանրապետությունում զբաղեցրել է 9-11-րդ տեղերը: ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճքի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Արսեն Պողոսյանը և Ներքին Գետաշենի N 1 միջնակարգ դպրոցի աշակերտ Պետրոս Սիրականյանը, մասնակցելով գերմաներեն լեզվի առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլին, նվաճել են Գերմանիայի Դաշնային Հանրապետության Ֆրայբուրգ քաղաքում կայանալիք միջազգային օլիմպիադայի մասնակցության ուղեգրեր: 2018 թվականի հուլիսի 15-28-ը Ֆրայբուրգում անցկացված միջազգային օլիմպիադային Լիճքի միջնակարգ դպրոցի աշակերտ Արսեն Պողոսյանը արժանացել է 1-ին կարգի մրցանակի, իսկ Ներքին Գետաշենի N 1 միջնակարգ դպրոցի աշակերտ Պետրոս Սիրականյանը՝ 2-րդ կարգի մրցանակի:

Գավառի N4 , Սևանի N3, Մարտունու N2, Վարդենիսի N4 և Ճամբարակի N1 հիմնական դպրոցներում 2017-2018 ուսումնական տարում շարունակվում է դասավանդվել «Ազգային երգ ու պար» առարկան: **Կազմակերպվել են դպրոցականների շախմատի 12-րդ օլիմպիադայի ներդպրոցական, տարածքային և մարզային փուլերը:** Կանոնակարգի համաձայն՝ մրցումները անցկացվեցին մինչև 14 տարեկան աշակերտների շրջանում: Ծավալված անգիջում մրցապայքարում հաղթող ճանաչվեց Գավառի Ս.Քոչարյանցի անվան N1 հիմնական դպրոցի թիմը, որը մարզը ներկայացրեց օլիմպիադայի հանրապետական փուլում: Կազմակերպվել են **ՀՀ ԱԺ գավաթի խաղարկության, շաքաղությունների մրցույթներ, նկարչական ցուցահանդեսներ, երաժշտական փառատոներ, ազգային տոներին, հոբելյանական տարելիցներին նվիրված հանդիսություններ, ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակներում** կազմակերպվող միջոցառումներ, նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության ռազմամարզական խաղեր, որոնք նպատակաուղղվել են սովորողների մեջ հայրենասիրության արմատավորմանն ու խորացմանը, ուսման որակի և արդյունավետության բարձրացմանը: Կազմակերպվել և անցկացվել են տարաբնույթ միջոցառումներ՝ նվիրված պետական և ազգային տոներին, ինչպես նաև հիշատակի՝ **Հայոց Մեծ եղեռնի** և 1988թ. երկրաշարժի զոհերի հիշատակի օրերին: Կազմակերպվել և անցկացվել են տարաբնույթ միջոցառումներ՝ նվիրված **Մայրենի լեզվի օրվան**, Հայոց բանակի ստեղծման տարելիցին, Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի, ՀՀ

Սահմանադրության օրվան: ՀՀ Գեղարքունիքի մարզի պետական հանրակրթական ուսումնական բոլոր հաստատություններում «**ՀՀ Առաջին Հանրապետության և Մայիսյան հեղոսամարտերի 100-ամյակին**» նվիրված միջոցառումների շրջանակներում 2018 թվականի առաջին և երկրորդ կիսամյակներում կազմակերպվել և անցկացվել են համադպրոցական տոնական միջոցառումներ, գրական-երաժշտական ցերեկույթներ, բաց դասեր, դասղեկի ժամեր, շաբադրությունների, նկարների, ձեռքի աշխատանքների, ասմունքի, ընթերցումների, անգիր արտասանության, ձեռագրերի մրցույթներ, պատմագեղարվեստական գրքերի նվիրումներ, փաստավավերագրական ֆիլմերի դիտումներ, կավճանկարչություններ, պատի թերթերի և վահանակների ձևավորումներ, համերգային ծրագրեր, նժդեհյան մտքերի ընթերցումներ, էքսկուրսիաներ, այցելություններ Եռաբլուր, Մարդարապատի հուշահամալիր, հուշակոթողներ և թանգարաններ: Անցկացվել են նաև շրջակա միջավայրի մաքրումներ: Մարզի բոլոր դպրոցներում «**Մեր մեծերը**» ծրագրի շրջանակներում 2018 թվականին կազմակերպվել և անցկացվել են մեծանուն հայորդիներ Միքայել Արամյանցին, Վահրամ Փափազյանին, Հակոբ Պարոնյանին, Զապել Եսայանին նվիրված գրական-երաժշտական ցերեկույթներ, ցուցահանդեսներ, լույս են ընծայվել պատի թերթեր և ձևավորվել վահանակներ: 2018 թվականին «**Հայրենի եզերք**» խորագրով «Բարբառների երկխոսություն» մարզային փառատոնին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել Գավառի N 2, Գանձակի N 1, Լճաշենի, Սարուխանի N 2, Ծակքարի, Ծովագարդի միջնակարգ և Գավառի N 3, N 5, Վարդենիս N 3, Սևանի N 1, N3 հիմնական դպրոցները: **Մարզի դպրոցականներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերել նաև Հանրապետական ասմունքի մանկապատանեկան 11-րդ , ինչպես նաև Էպոսասացության փառատոներին՝ տուն վերադառնալով մրցանակներով:**

Կազմակերպվել են **բոնցքամարտի, ծանրամարտի, ձեռքի գնդակի, վոլեյբոլի, շախմատի, ֆուտբոլի** և այլ մարզաձևերից մարզային առաջնություններ, իսկ հաղթողներից շատերը հաջողությամբ են հանդես եկել նաև մրցումների հանրապետական փուլերում: Որոշակի աշխատանքներ են իրականացվել մարզի ուսումնական հաստատություններում սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպման ուղղությամբ: Ապահովվել է ՀՀ հանրակրթական ավագ դպրոցների աշակերտների մասնակցությունը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված ռազմամասնագիտական կողմնորոշման վերաբերյալ հանդիպմանը:

Հանրակրթական տարբեր առարկաներից 2018 թվականին վերապատրաստվել և ատեստավորվորել են 533 ուսուցիչներ:

Մարզի հանրակրթական դպրոցների մանկավարժներից որակավորման տարակարգ են ստացել ընդամենը 87 ուսուցիչներ: Մարզի 27 դպրոցներում կազմակերպվել են հաստատության տնօրենի թափուր պաշտոնի զբաղեցման մրցույթներ, և հաղթողների հետ կնքվել են համապատասխան աշխատանքային պայմանագրեր: Մարզային ենթակայության բոլոր ուսումնական հաստատությունները ապահովված են ինտերնետ կապով:

2017-2018 ուստարում մարզի հանրակրթական հաստատություններում աշխատել են 4470 մարդ, որոնցից 2917-ը՝ ուսուցիչներ: Աշակերտ-ուսուցչական դրույք հարաբերակցությունը 9.2 է, դասարանների միջին խտությունը՝ 18,7 ,

ուսուցիչների միջին աշխատավարձը կազմել է 125.000 դրամ: Բոլոր մանկավարժների աշխատավարձը հաշվարկվել է օրենսդրությամբ սահմանված կարգով և վճարվել ժամանակին:

Նոյեմբերի 19-ին տեղի ունեցավ Գավառ քաղաքի Լ.Քալանթարի անվան դրամատիկական թատրոնի նորակառույց շենքի հանդիսավոր բացման արարողությունը՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ: Մշակութային կրթության աջակցության հիմնադրամի հետ համատեղ նոյեմբերի 18-ին Գավառի արվեստի դպրոցում կազմակերպվեց պարի ստուգատես-փառատոն, որին մասնակցեցին մարզի 20 պարային համույթներ: Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին «Նռան հատիկ» հանրապետական մանկապատանեկան թատերական փառատոնի հանրապետական փուլին մասնակցեցին մարզի 5 մանկապատանեկան թատերախմբեր: Գավառի Հայրապետ Խաչատրյանի անվան արվեստի դպրոցի սաներ Սաթենիկ Սահակյանը, Մարիաննա Բրսիկյանը և Հայկ Յազեթյանը հոկտեմբերին մասնակցել են Չեխիայի Պրահա քաղաքում անցկացված միջազգային երգի մրցույթ-փառատոնին՝ արժանանալով բարձր մրցանակների: Մեղեդի միջազգային երգի փառատոնում Գավառի Հ.Թալալյանի անվան երաժշտական դպրոցի սան Անի Նաջարյանը արժանացել է 1-ին մրցանակի, իսկ Սամվել Խաչիկյանը՝ գրանպրիի, Գավառի Հայրապետ Խաչատրյանի անվան արվեստի դպրոցի սան Դոնարա Գրիգորյանը՝ 2-րդ մրցանակի, Սարուխան գյուղի արվեստի դպրոցի սան Սյասնիկ Չիչոյանը՝ 2-րդ մրցանակի: «Ոսկե տավիղ» հանրապետական 3-րդ մրցույթ փառատոնում Սևանի Վալերի Սարգսյանի անվան երաժշտական դպրոցի սան, շեփորահար Արամ Մուրադյանը արժանացել է 1-ին մրցանակի, Գավառի Հայրապետ Խաչատրյանի անվան արվեստի դպրոցի սաներ Կարինե Պետրոսյանը և Դիանա Հովհաննիսյանը՝ 3-րդ մրցանակի, Նորատուսի արվեստի դպրոցի սաներ Ռաֆայել Կարապետյանը և Արտյոմ Ավետիսյանը՝ 2-րդ մրցանակի, իսկ Փայլակ Պետրոսյանը և Գագիկ Ստեփանյանը՝ 3-րդ մրցանակի: Վրաստանի Թբիլիսի քաղաքում կազմակերպված «Դեռվահարների համույթ» միջազգային մրցույթ-փառատոնում Գավառի արվեստի դպրոցի դեռվահարների խումբը արժանացել է 1-ին մրցանակի, իսկ Կարեն Եղոյանը պարզևատրվել է մեդալով: Հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին հանրապետությունում անցկացվեց ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության դպրոցների 8-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադան, որի ծրագրում ընդգրկված մինի ֆուտբոլ, հնգամարտ , շախմատ , բասկետբոլ, վոլեյբոլ, սեղանի թենիս, հրաձգություն և բազկամարտ մարզաձևերի մրցումներին մասնակցեցին նաև մարզի հավաքական թիմերը՝ գրավելով մրցանակային տեղեր: Հոկտեմբերի 27-ից նոյեմբերի 3-ը կազմակերպվել և անցկացվել են դպրոցականների շախմատի 13-րդ օլիմպիադայի տարածքային փուլի մրցումները: Հոկտեմբեր- նոյեմբեր ամիսներին Գավառի մարզադպրոցի հավաքական թիմը մասնակցեց ՀՀ դպրոցականների 3-րդ մարզական խաղերի ծրագրով Դիլիջանում անցկացվող մինի ֆուտբոլի մրցումներին և գրավեց 2-րդ մրցանակային տեղը: Նոյեմբերին ամսին Գավառի N8 միջնակարգ դպրոցում անցկացվեց ՀՀ դպրոցականների 3-րդ մարզական խաղերի ծրագրով նախատեսված սպորտլանդիա մարզական միջոցառման եզրափակիչ փուլի մրցումները, որտեղ մարզը ներկայացնող Գավառի N8 միջնակարգ դպրոցի թիմը գրավեց 2-րդ տեղը: Նոյեմբերի 5-ին Ճամբարակ համայնքում անցկացվեց բոնցքամարտի ավագ տարիքի պատանիների մարզային առաջնություն: Նոյեմբերին Վրաստանի Գորի քաղաքում մեկնարկած ուժային եռամարտի միջազգային մրցաշարին մասնակցեցին Գավառ քաղաքի մարզադպրոցի և Հայրավանք գյուղի մարզիկները: Մրցաշարում հաղթող ճանաչվեցին Գավառի մարզադպրոցը ներկայացնող,

հաշմանդամություն ունեցող մարզիկ Գևորգ Աֆրիկյանը, մրցանակային տեղեր գրավեցին հայրավանքցի մարզիկներ Համլետ Թադևոսյանը, Արգամ Հայրապետյանը, Գևորգ Դադիկյանը: Գևորգ Աֆրիկյանին իր նստավայրում ընդունեց Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանը: Դեկտեմբերի 1-ին տասնօրյակում Սևանի Ն.Դազարյանի անվան մարզադպրոցում անցկացվեցին ուժային եռամարտի մարզային ստուգատես- մրցումներ: Դեկտեմբերի 23-24-ը Վերին Գետաշենի մշակույթի տանը անցկացվեց Ոչ՝ ծխախոտին խորագրով բազկամարտի մարզային առաջնություն, որին մասնակցեցին 48 մարզիկներ:

Առողջապահության և սոցիալական ապահովության ոլորտում ՀՀ Գեղարքունիքի մարզում հաշվետու ժամանակահատվածում մարզպետարանի ենթակայությամբ գործել են 39 բուժհաստատություններ և սոցիալական առջակցության տարածքային 5 գործակալություններ: Մարզում մասնավոր հիմունքներով գործում են 80 դեղատուն և 30 ստոմատոլոգիական գործունեությամբ զբաղվող անհատ ձեռնարկատերեր: ՀՀ Գեղարքունիքի մարզպետի կողմից վերականգնողական և առողջարանային բուժման ուղեգիր է հատկացվել 23 հաշմանդամի: 2018 թվականին մարզում գրանցվել է 2007 ծնունդ: Մարզի մահճակալային ֆոնդը 335 է: Մահճակալային տարեկան զբաղվածությունը մոտ 286 օր է: 2018թ. գլոբալ բյուջեն կազմում է 2.618.916.000 դրամ: Աշխատավարձի ֆոնդը կազմում է շուրջ 75%: 2018թ. մարզի բժշկական կազմակերպություններում վճարովի ծառայության և այլ մուտքերը կազմել են 246.944.800 դրամ: Մարզի բժշկական կազմակերպություններում աշխատում են 346 բժիշկներ, 921 բուժքույրեր, 300 կրտսեր բուժաշխատողներ և վարչատնտեսական աշխատողներ: *Մարզում գործում է շուրջօրյա թեժ գիծ: 2018 թվականի հոկտեմբերին շահագործան է հանձնվել Սեւանի արդիականացված բժշկական կենտրոնի շենքը:*

Հաշվետու ժամանակահատվածում մարզում հաշվառված է շուրջ 37.136 կենսաթոշակառու, որից 15520-ը հաշմանդամներ են, 401-ը՝ զոհված ազատամարտիկների և 21 անհայտ կորած անձանց, 7800-ը՝ փախստական ընտանիքներ, որոնց հիմնական մասը ստացել է ՀՀ քաղաքացիություն: 2018թ. մարզում ընտանեկան նպաստ են ստացել 10729 /միջին ամսեկան/ ընտանիք, սոցիալական նպաստ՝ 1565 /ընդամենը՝ 12987/, իսկ միանվագ դրամական օգնություն՝ 714 ընտանիք: Մարզի Սևան և ճամբարակ քաղաքներում գործում են բարեգործական 2 ճաշարաններ՝ 122 շահառուներով: Ավելի քան 884 կարիքավոր ընտանիքներ մարզպետի կողմից ստացել են դրամական օգնություն: 2018 թվականի հուլիս - օգոստոս ամիսներին պետբյուջեի հաշվին մարզի 307 առավել անապահով, զոհված և վիրավոր ազատամարտիկների, ծնողագուրկ և բազմազավակ ընտանիքների երեխաներ անվճար կարգով հանգստացել են Հանքավանի մանկական ամառային հանգստյան ճամբարներում: Մարզում գործագուրկ են 4843 քաղաքացի, որոնցից 186-ը հաշմանդամներ են: Գործագուրկներից զբաղվածության 5 տարածքային կենտրոնների աջակցությամբ մշտական ախատանքի են տեղավորվել 536 շահառու, որոնցից 16-ը՝ հաշմանդամ: Բժշկական հաստատություններում իրականացվում են դեղերի, բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման, բաշխման, պահպանման, հաշառման աշխատանքներ, որը պահանջում է ամենօրյա հսկողություն: Ուսումնասիրվում է մարզի սոցիալական ընդհանուր վիճակը, կատարվում է սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության հաշվառում:

Ծննդօգնության և մանկական հավաստագրերի ներդրումից հետո մարզի տարածքում բարձրացել է հղիների վաղ ընգրկման ցուցանիշը, ինչպես նաև 0-7 տարեկան երեխաների ստացիոնար բուժման գործի կազմակերպման գործընթացը: 2018 թվականի ընթացքում մշտապես իրականացվել են աշխատանքներ մարզի տարեց և հաշմանդամություն ունեցող ազգաբնակչության սպասարկման ուղղությամբ: Հատկապես ուշադրության կենտրոնում են Հայրենական և Արցախյան պատերազմի մասնակիցները և վետերանները: Յուրաքանչյուր ամիս բուժամբուլատորիաների կողմից մարզպետարան է ներկայացվում նրանց առողջական վիճակի սպասարկմանը վերաբերող տեղեկատվություն: Արցախյան և ընդհանուր հաշմանդամություն ունեցող անձանց տրվել են առողջարանային ուղեգրեր, ինչպես նաև դրամական օգնություններ: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աջակցությամբ մարզի հաշմանդամ քաղաքացիներին հատկացվել են պրոթեզներ, օրթեզներ, հաշմանդամության սայլակներ, ձեռնափայտեր, լսողական ապարատներ:

Գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտում «Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի» շրջանակներում 18 համայնքներում իրականացվել է 517 միլիոն դրամի աշխատանքներ, որից համայնքային ներդրումները կազմել են 74.4 միլիոն դրամ: 2018 թվականի գյուղատնտեսական տեխնիկայի Ֆինանսական վարձակալության լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում համայնքների կողմից ձեռք է բերվել 50 միավոր տեխնիկա: Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Գեղարքունիքի մարզի հողօգտագործողներին 2018 թվականի գարնանացանի համար հատկացվել է գարնանացան ցորենի, հնդկացորենի, եգիպտացորենի, ոլոռի, սիսեռի, գարնանացան գարու, առվույտի և կորնզանի սերմացու, **8.4** տոննա ֆոսֆորական և **17.1** տոննա կալիումական պարարտանյութեր, **201367** լիտր դիզելային վառելանյութ: 2018թ. գյուղատնտեսական տարում ստացված համախառն բերքը կազմել է՝ 49551.8 տոննա հացահատիկ , 168908.3 տոննա կարտոֆիլ, 35202.7 տոննա բանջարեղեն, 11858.1 տոննա պտուղ:

2018թ. ջրօգտագործողների հետ կնքվել է 12325 պայմանագիր՝ 3040 հեկտար ցանքեր ոռոգելու համար: Տրված ջուրը կազմել է 7094 հազ. մ³ ջրտուք, ոռոգման ջրի վարձավճարների գանձումը հունվարի 17-ի դրությամբ հասցվել է մինչև 66.8 տոկոսի: Մկնանման կրծողների դեմ պայքարելու համար անհրաժեշտ միջոցառումներ են իրականացվել մարզի 20 համայնքներում՝ 3840 հեկտար տարածքում: Մարզի 57 համայնքներում իրականացվել է գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդություններով և վնասատուներով վարակվածության աստիճանի ուսումնասիրություն՝ 23650 հեկտարի վրա: Պետական բյուջեի միջոցների հաշվին մարզի գյուղատնտեսական կենդանիների նկատմամբ իրականացվել են ծրագրով նախատեսված բոլոր տեսակի հակաանասնահամաճարակային և ախտորոշիչ միջոցառումները:

2018 թվականին մարզում տեղաձև կարկուտի հետևանքով հողօգտագործողներին պատճառած վնասների փոխհատուցման համար ՀՀ կառավարության որոշմամբ մարզի Կարմիրգյուղ, Նորատուս, Ճամբարակ, Վարդենիկ, Լճավան, Աստղաձոր, Ծովակ և Զոլաքար համայնքներում վնասները մասնակի փոխհատուցելու և գումարներ տրամադրելու համար հատկացվել է 17 միլիոն 517 հազար դրամ:

ՀՀ կառավարության որոշմամբ մարզի սահմանամերձ Ճամբարակ համայնքի և Վահան բնակավայրի հողօգտագործողներին փաստացի ցանված 49.17 հեկտար աշնանացանի համար պետության կողմից տրվել է սուբսիդացիա՝ 2միլիոն 950 հազար դրամի չափով, որից օգտվել են 45 շահառուներ:

Մարզպետի հանձնարարությամբ կամ ստացված ահազանգերի հիման վրա պարբերաբար իրականացվել են շրջայցեր մարզի տարածքում՝ բնապահպանության օրենսդրության դրվածքը ուսումնասիրելու նպատակով: Այս ընթացքում կոնկրետ դեպքերով կատարվել են չորս այցելություններ, որոնք վերաբերվում են մարզի Լճաշեն համայնքի վարչական տարածքից և Սևան համայնքի Ցամաքաբերդ բնակավայրից սևահողի ապօրինի հանմանը, Չկալովկա համայնքի մայրուղուն հարող տարածքում քանդման աշխատանքներին և Գանձակ համայնքով հոսող գետի հունի քանդմանը: Առաջին 2 դեպքերով զբաղվում են իրավապահ մարմինները, մյուս 2 դեպքերով մեր կողմից կազմվել են արձանագրություններ և ներկայացվել վերադասին: Սևանա լճում սիգ ձկնատեսակի ձվադրման հետ կապված որսի արգելքի խստացման ժամանակահատվածում, ըստ հաստատված ծրագրի, իրականացվել են համատեղ նախատեսված միջոցառումները, և յուրաքանչյուր տասնօրյակը մեկ ամփոփվել կատարված աշխատանքների արդյունքները:

Պատկան մարմինների հետ համատեղ հսկողություն է սահմանվել Սևանա լիճը գոտևորող անտառային ճանապահներին:

Տինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ապահովվել է մարզպետարանի մասնակցությունը մարզպետարանի ենթակայության բյուջետային կազմակերպությունների 2018թ. պահպանման ծախսերի նախահաշիվների կազմման, տնտեսագիտական դասակարգման, հողվածների փոփոխությունների կատարման, ինչպես նաև գանձապետական բաժանմունք- բյուջետային կազմակերպության հարաբերությունների կարգավորմանը, որի արդյունքում 2018թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում մարզի 21 հանրակրթական ուսումնական հաստատություններում կատարվել է հաստատված նախահաշիվների փոփոխություններ, և 86 մլն. 187 հազար դրամ հատկացվել է ընթացիկ վերանորոգման և գույքի ձեռք բերման նպատակով: Մարզի համայնքներին մշտապես տրվել է մեթոդական և խորհրդատվական օգնություն 2018-2019թ. բյուջեների կազմման ուղղությամբ:

ՀՀ պետական բյուջեից համայնքներին տրամադրված սուբվենցիայի նպատակային օգտագործման նպատակով մարզի համայնքներից հավաքագրվել են համապատասխան կատարողական ակտերը և ժամանակին ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարություն:

ՀՀ Գեղարքունիքի մարզի 57 համայնքների սեփական եկամուտների տարեկան պլանային թիվը կազմում է 1 մլրդ. 989 մլն. 452 հազար 600 դրամ, որը նախորդ տարվա նկատմամբ ավել է նախատեսվել 496 մլն. 230 հազ. 800 դրամով կամ 33.2%-ով: Սեփական եկամուտների կատարողականը կազմել է 90.5%, կամ պլանավորված 1մլրդ. 989մլն. 452 հազար 600 դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 1մլրդ 800մլն 7հազար 900 դրամ: 2018-ի տարեսկզբին խոշորացված Գեղամասար համայնքը ունեցել է աշխատողների աշխատավարձի կուտակված պարտքեր՝ գումարով 42 մլն 179 հազար 500դրամ, իսկ

տարեվերջին վերոհիշյալ պարտքը նվազել և հասել է 8 մլն. 515 հազար 500 դրամի: Կուտակված պարտքերը մարվում են ըստ կնքված ժամանակացույցերի:

Քաղաքաշինության ոլորտում 2018թ. ընթացքում ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցներով ավարտվել են Սևան քաղաքի N 1 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքները՝ 42,9 մլն. դրամով: Շարունակվել են Զուլաքարի համայնքի N 2 միջնակարգ դպրոցի և Սևան քաղաքի մշակույթի տան հիմնավերակառուցման և հիմնանորոգման աշխատանքները՝ համապատասխանաբար 147,3 մլն. և 157,0 մլն դրամի հատկացումներով: Սկսվել են Ն.Գետաշենի N 1 միջնակարգ դպրոցի հիմնանորոգման և նոր մասնաշենքի կառուցման աշխատանքները, որոնց համար հատկացվել է 49,1 մլն. դրամ: ՀՀ կառավարության որոշումներով հատկացված միջոցներով վերականգնվել են Վ.Գետաշենի N 1 միջնակարգ դպրոցի՝ քամուց տուժած երկու մասնաշենքերի տանիքները 14,6 մլն դրամով: ՀՀ կառավարություն են ներկայացվել թվով 18 հրատապ լուծում պահանջող ծրագրեր, որոնցից երկուսը (Գանձակ համայնքի խորքային հորի հորատում և Ծաղկաշեն համայնքի խորքային հորի պոմպի ձեռքբերում) ավարտվել են, իսկ մնացած ծրագրերի համար շուտով կհայտարարվի շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցույթներ: Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ շարունակվել են Գավառի N 2 հիմնական դպրոցի շենքի շինարարական աշխատանքները:

«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի միջոցով ավարտվել են Վ.Գետաշեն գյուղի խմելու ջրագծի արտաքին ցանցի կառուցման աշխատանքները՝ 79.9 մլն. դրամով եւ Զուլաքար համայնքի խմելու ջրի ներքին ցանցի կառուցման աշխատանքները՝ 196.6 մլն. դրամով:

Մարգային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների սպասարկման համար հատկացվել է 143.6 մլն դրամ: Փաստացի կատարողականը կազմել է 122.4 մլն. դրամ: Տնտեսումը կազմել է 21.2 մլն դրամ: Տնտեսումը առաջացել է կայացած մրցույթի և նվազեցման գործակիցներ կիրառելու արդյունքում:

Ճանապարհաշինության ոլորտում 2018 թվականին ՀՀ պետական և համայնքային բյուջեների հաշվին մարզում ներդրվել է 3 միլիարդ 339.5 մլն. դրամ, որից 2 միլիարդ 869.7մլն.դրամը՝ ՀՀ պետական, 469.7 մլն.դրամը՝ համայնքային բյուջեներից: Ընդհանուր առմամբ հիմնանորոգվել են 28.9կմ տարբեր նշանակության ճանապարհահատվածներ և փողոցներ, 3 կամուրջներ, 3 փլվածքներ, տեղադրվել են 5169 գծամետր մետաղական արգելափակոցներ, ինչպես նաև իրականացվել են պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների սպասարկման աշխատանքներ: Իրականացվել է թվով 16 ճանապարհաշինական սուբվենցիոն ծրագրեր, որոնց արդյունքում ներդրվել է 527.3 մլն.դրամ, որից 228.2 մլն.դրամը տրամադրվել է ՀՀ պետական, 299.1 մլն. դրամը՝ համայնքային բյուջեներից: Իրականացնել է շուրջ 62200 քմ ասֆալտբետոնյա ծածկի վերին շերտի տեղադրման աշխատանքներ, կամ հիմնանորոգվել է 9.3 կմ տարբեր փողոցներ:

Համայնքային բյուջեների հաշվին իրականացվել են Աստղաձոր համայնքի 6-րդ և Զ. Անդրանիկի փողոցների, Երանոս համայնքի 8-րդ փողոցի, Ներքին Գետաշենի համայնքային փողոցների հիմնանորոգման և Սևան, Գավառ, Մարտունի, Վարդենիս քաղաքային համայնքների փողոցների փոսային նորոգումների աշխատանքները, որի նպատակով

ներդրվել է 170.6 մլն.դրամ: Արդյունքում իրականացվել է 20660 քմ մակերեսով ասֆալտբետոնյա ծածկի վերին շերտի տեղադրման և փոսային նորոգման աշխատանքներ:

Ճանապարհների հիմնանորոգմանը զուգահեռ իրականացվել են նաև պետական նշանակության ավտոճանապարհների պահպանման, շահագործման և ձմեռային պահպանության աշխատանքներ, որի արդյունքում 2018 թվականին ներդրվել է 951.0 մլն.դրամ:

Տարածքային կառավարման ոլորտում վարչական վերահսկողություն է իրականացվել 22 համայնքներում: Ուսումնասիրությունների արդյունքները քննարկվել են մարզպետի և մարզկադրերի նիստերում և տրվել են հանձնարարականներ՝ թերությունները վերացնելու ուղղությամբ: Ձեռնարկված մրջնոցառումների մասին համայնքների ղեկավարները գրավոր տեղեկացրել են մարզպետարան: Այդ տեղեկանքները ուղարկվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն: Մեթոդական ու խորհրդատվական օգնություն է ցուցաբերվել մարզի բոլոր համայնքներին բյուջեների կազմման, նորմատիվ և այլ իրավական ակտերի ընդունման, հողի հարկի և գույքահարկի բազաների ճշգրտման, ՏԻՄ-երի որոշումների հրապարակայնության ապահովման, համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի տնօրինման օրինականության պահպանության, համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման, համայնքային ծառայության բնագավառում իրականացվող գործընթացների կատարման հարցերում: 2018թ. մարզի 18 համայնքներում հայտարարվել են 129 մրցույթներ, որոնց արդյունքում պաշտոնների են նշանակվել 101 համայնքային ծառայողներ: 28 պաշտոնների մրցույթները չեն կայացել դիմողներ չլինելու պատճառով: Մարզի 25 համայնքներում անցկացվել են ատեստացիաներ, որոնց արդյունքում ատեստավորվել են 89 համայնքային ծառայողներ: Մարզի համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայողներից 2018թ. ընթացքում հերթական վերապատրաստում են անցել 11 համայնքային ծառայողներ, 18 տեղական ինքակառավարման մարմինների ներկայացուցիչներ, ովքեր ստացել են համապատասխան տեղեկանքներ: ՀՀ Գեղարքունիքի մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման պլանների, ծրագրերի մշակման կազմակերպման և իրականացման ուղղությամբ կատարվել են զգալի աշխատանքներ: Կատարելագործվել է մարզի աղետների ռիսկերի նվազեցման ինստիտուցիոնալ բազան: ՀՀ Գեղարքունիքի մարզպետի կողմից ընդունվել է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտին վերաբերող 12 որոշում և 7 կարգադրություն: Մարտ-մայիս ամիսներին ճշգրտվել են «ՀՀ Գեղարքունիքի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլանը», «ՀՀ Գեղարքունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության պլանը», «ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակչության տարահանման պլանը», «ՀՀ Գեղարքունիքի մարզի տարահանված բնակչության կենսապահովման գործընթացների նախապատրաստման պլանը»: Մարզի ուսումնական հաստատություններում մշակվել են «Աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանները» և սկսվել է մարզի համայնքների «Աղետների ռիսկի նվազեցման պլանների» մշակման գործընթացը: Մարզի տարածքում արտակարգ իրավիճակների, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման ծրագրերի

իրականացման արդյունքում մի շարք տեղամասերում նվազեցվել է արտակարգ իրավիճակների առաջացման վտանգը: Թարմացվել է համապատասխան տեղեկատվական բազան, տարվել են աշխատանքներ համապատասխան տեխնիկաների պատրաստականությունն ապահովելու ուղղությամբ: Տարվել են աշխատանքներ արտակարգ իրավիճակների հետևանքով տուժածների պատճառված վնասի չափի արձանագրման ուղղությամբ: Ուսումնասիրվել են մարզի քարաթափումների, սողանքավտանգ և ջրածածկվող տարածքները, վտանգավոր կամուրջները, արհեստական պատվարներով ջրամբարները: Մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ծրագրերով իրականացվել են մի շարք միջոցառումներ: Տարվա ընթացքում մարզի փրկարարներն արձագանքել են 552 արտակարգ դեպքերի: Մարզում ստեղծված է 10 քաղաքացիական պաշտպանության ծառայություն: Ճշգրտվել է մարզի տարահանման պլանը: Դրա համաձայն անհրաժեշտության դեպքում մասնակի տարահանում է նախատեսված մարզի սահմանամերձ՝ 29, սողանքավտանգ՝ 6, աղետալի ջրածածկման վտանգի 6 բնակավայրերից, ուժեղ երկրաշարժի ազդեցության գոտուց կախված հնարավոր էպիկենտրոններից 30-39 բնակավայրերից: Այդ աշխատանքները կազմակերպելու համար մարզային տարահանման հանձնաժողովից բացի մարզի բոլոր համայնքներում ստեղծված են նաև համայնքային տարահանման հանձնաժողովներ, տարահանման և ընդունման հավաքակայաններ: Ստեղծված են նաև 151 ժամանակավոր տեղակայման կետեր, 42 երկարատև բնակության կետեր:

Մարզի տարածքում 2018թ. անցկացվել են ՀՀ Ազգային Ժողովի և թվով 11 համայնքներում ՏԻՄ ընտրություններ, որի ընթացքում ապահովվել է հասարակական կարգը և հասարակական անվտանգությունը:

2018թ. 12 ամիսների ընթացքում Գեղարքունիքի մարզում արձանագրվել է հանցագործության 884 դեպք, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 729-ի դիմաց: Բացահայտման տոկոսը կազմել է 73.0% նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 87.6%-ի դիմաց: Մարզպետի կողմից տրվել են հանձարարականներ՝ հանցագործությունների կանխարգելման, ինչպես նաև բացահայտման տոկոսի բարձրացման ուղղությամբ:

2018թ. ընթացքում ապօրինի շինարարության բնագավառում ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 154 հոդվածով արձանագրվել է վարչական իրավախախտումների 7 դեպք, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում վարչական իրավախախտման դեպքեր չեն արձանագրվել: Արձանագրվել է ջրային կենդանիների ապօրինի որսի 1 դեպք, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 2-ի դիմաց: Բոլոր դեպքերն էլ հայտնաբերվել են ոստիկանության ծառայողների կողմից: Արձանագրվել է ապօրինի անտառահատման 9 դեպք, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 5-ի դիմաց: Կազմակերպվել են համապատասխան միջոցառումներ և արձանագրվել է ապօրինի, առանց համապատասխան փաստաթղթերի, վառելիքայտ տեղափոխելու 24 դեպք, նախորդ տարվա 32-ի դիմաց: Հողերի ապօրինի օգտագործման դեպքեր 2018թ. չեն արձանագրվել: Մարզի քաղաքային և 1000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղական համայնքապետարաններում ներդրվել է Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը: Քաղաքային և 3000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղական համայնքապետարաններն ունեն համացանցային պաշտոնական կայք:

Մարզի բոլոր համայնքապետարաններում առկա է համացանցին միացված առնվազն մեկ համակարգիչ:

Իրավաբանական ոլորտում մարզի համայնքների կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան են ներկայացվել համայնքների ավագանիների թվով 458 որոշումներ: Դրանց իրավական փորձաքննության արդյունքում 13 որոշումներ համապատասխան պարզաբանմամբ վերադարձվել են տվյալ համայնքներ՝ թերությունները վերացնելու և կայացված որոշումները օրենքներին համապատասխանեցնելու համար:

ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին են ներկայացվել 2 հայցապահանջներ:

Իրավաբանական բաժինը ընդհանուր իրավասության, վերաքննիչ դատարաններում շուրջ 12 անգամ հանդես է եկել որպես հայցվորի և պատասխանողի ներկայացուցիչ, ինչպես նաև պատասխանել է թվով 8 քննչական պահանջների: Գրավոր պատասխան է տրվել քաղաքացիների թվով 58 դիմում-բողոքների:

Հողաշինարարության և հողօգտագործման ոլորտում 2018թ. ընթացքում վարձակալության տրամադրված 61.2 հազ. հա համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի համար հաշվարկվել է 195.0 մլն. դրամ վարձավճար, որի դիմաց համայնքային բյուջե է մուտքագրվել 171.1 մլն. դրամ, որը կազմում է 87.7%: Վարձավճարների մեկնարկային գները սահմանվել են գուտ եկամուտի 16-20 տոկոսի չափով:

2018թ. մարզի 22 համայնքներում կատարվել են ուսումնասիրություններ պետական և համայնքային սեփականության հողամասերի օտարման, օգտագործման տրամադրման, հետ վերցնելու օրինականության ապահովման ուղղությամբ: Ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքները քննարկվել են մարզպետի խորհրդակցություններում և մարզխորհրդի նիստերում: Համապատասխան որոշումներում ու արձանագրություններում՝ համայնքների ղեկավարների գործունեությանը տրվել է գնահատական և կոնկրետ ցուցումներ ու հանձնարարականներ թերություններ վերացման համար:

2018թ. ընթացքում մարզի 36 համայնքներում օտարվել է 93.24 հա՝ 272 միավոր հողակտոր: Համայնքների բյուջեներ է մուտքագրվել 113.6 մլն.դրամ:

Օտարման միջին արժեքը կազմել է սահմանված նվազագույն մեկնարկային արժեքի 303 %-ը, ընդ որում 36 միավոր օտարվել է սահմանված նվազագույն մեկնարկային արժեքի 100-150%-ի գնով, 15 միավոր 150-180%-ի գնով, 221 միավոր 180 %-ից բարձր գնով:

Միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն են ներկայացվել բնակավայրերի գլխավոր հատակագծերի և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների փոփոխության 25 առաջարկներ: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ստացվել են

դրական եզրակացություններ: Սահմանված կարգով փոխվել են բջջային կայանների, Իրան-Հայաստան էլեկտրահաղորդման օդային գծերի հենասյունների և ֆոտովոլտային արևային կայանների կառուցման համար անհրաժեշտ հողամասերի նպատակային նշանակությունները:

Ուսումնասիրվել, քննարկվել և պատասխանվել է վերադասից, համայնքներից ու այլ կազմակերպություններից ուղարկված 124 գրությունների և քաղաքացիներից ստացված 91 դիմումների:

Ջարգացման ծրագրերի, տուրիզմի և վերլուծության ոլորտում ՀՀ Գեղարքունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը հիման վրա մշակվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի 2018 թվականի գործունեության ծրագիրը: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել մարզի 2018 թվականի գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումների ֆինանսավորումը, որը կազմում է 54մլրդ. 670մլն. 959հազ. ՀՀ դրամ: 2018 թվականի 1-ին կիսամյակում այն կազմել է 12մլրդ. 524մլն. 559,1հազ. ՀՀ դրամ, իսկ տարեկան փաստացի ցուցանիշը կտրվի մոնիտորինգի հաշվետվության արդյունքում: ՏԿԶԼ հանձնարարությամբ ընթացքի մեջ է 2018 թվականի տարեկան գործունեության ծրագրի մոնիթորինգի հաշվետվության կազմման աշխատանքները, իսկ մշակվում է 2019 թվականին մարզի տարեկան գործունեության ծրագրի նախագիծը: Ավարտվել են աշխատանքները մարզի համայնքների հետ հնգամյա զարգացման ծրագրերի և տարեկան աշխատանքային պլանների կազմման գործընթացում: Իրականացվել է 6 նոր ընտրված համայնքների կողմից հնգամյա զարգացման ծրագրերի և տարեկան աշխատանքային պլանների կազմման գործընթացը: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել 46 ծրագրային հայտեր, որոնցից հաստատվել են 41 ծրագիր և իրականացվել են 40 սուբվենցիոն ծրագրեր: ՀՀ կառավարության կողմից համայնքներին փոխանցվելիք գումարը կազմել է՝ **397մլն.309.8հազ դրամ**, իսկ համայնքների կողմից ներդրվել է **510մլն.560.5հազ դրամ**: Իրականացվել են ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգման և գիշերային լուսավորության ցանցերի, ոռոգման առուների, ջրագծերի, հանդիսությունների սրահների, մանկապարտեզների, խաղահրապարակների, այգիների կառուցման, բարեկարգման և հիմնանորոգման աշխատանքներ: Մշակվել է 2018 թվականի համար մարզպետի աշխատանքների գնահատման մոնիտորինգի հիմնական ցուցանիշներ, որը կարող է հաջորդ տարի փոփոխության ենթարկվել նոր բաղադրիչների առկայության դեպքում: 2018 թվականի մոնիտորինգի հիմնական ցուցանիշների 1-4-րդ կիսամյակի մոնիտորինգի հաշվետվությանները ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն: Հավաքագրվել և ՀՀ կառավարություն ու ՀՀ կառավարման և զարգացման նախարարություն են ներկայացվել ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներում զբոսաշրջության զարգացմանն ուղղված 12 ծրագրային առաջարկներ: Ընթացքի մեջ է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից ՀՀ տարածքների համաչափ զարգացմանն ուղղված ներդրումային-գործարար ծրագրերի հարթակի ստեղծման աշխատանքները: Մարզի համայնքներից 12 գործարար ծրագիր-առաջարկ է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն: Գեղարքունիքի մարզպետարանի և Ֆրանսիայի Հանրապետության Իգերի դեպարտամենտի միջև ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում նախապատրաստական աշխատանքներ է իրականացվում՝ 2019 թվականին նոր համագործակցության հուշագիր կնքելու համար: Մարզպետարանում իրականացվել է

Հայաստանում կայուն տուրիզմին նվիրված 4-րդ սեմինարը, որը նախաձեռնել էր Գեղարքունիքի մարզպետարանը, Սևանի, Գորիսի և Վարդենիսի քաղաքապետարանները և նրանց ֆրանսիացի գործընկերները՝ Իզերի դեպարտամենտի, Գրենոբլի, Վիեննի և Ռոմանի քաղաքապետարանները:

Գեղարքունիք-Իզեր համագործակցության շրջանակներում «Բժշկական օգնություն և զարգացում» միջազգային առողջապահական հասարակական կազմակերպության կողմից մարզում իրականացվել են բուժսպասարկման ոլորտի մասնագետների վերապատրաստումներ, և բոլոր մասնակիցներին բաժանվել են առաջին բուժօգնության պարագաներով հագեցած պայուսակներ: Վերանորոգվել են Ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջանների մի շարք բուժամբուլատորիաներ, տրվել տարբեր բուժսարքավորումներ: Վերանորոգվել են Սևանի տարածքի մանկապարտեզների բուժկետեր և բժշկական կենտրոնին նվիրաբերվել է բժշկական թափահարիչ սարք, տրամադրվել են այլ աջակցություններ: Համագործակցությունը առողջապահության ոլորտում շարունակվում է:

Ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում զբոսաշրջության ոլորտում ֆրանսիական օպերատոր ԱՖՐՄՏ տուրիստական կազմակերպության կողմից իրականացվել են մի շարք ծրագրեր: Հայտարարվել է զբոսաշրջության կրեատիվ դրամաշնորհ, որի արդյունքում հավանության է արժանացել երիտասարդների կողմից առաջարկված մեկ ծրագիր՝ 1000 եվրո արժեքով: Հայտարարվել է նոր մրցույթ զբոսաշրջության կրեատիվ դրամաշնորհ՝ 500 եվրո արժողությամբ: Իրականացվել է տուրիստական գրասենյակների ներդրում Սևանի թերակղզում տեղադրված է զբոսաշրջային գրասենյակ: Սևան, Գավառ, Ճամբարակ և Վարդենիս քաղաքներում տեղադրվել է եռալեզու զբոսաշրջային վահանակներ: Իրականացվել են ֆրանսախոսության արժևորմանն ուղղված տարբեր միջոցառումներ:

Համագործակցության ծավալման նպատակով ՌԴ Սարատովի մարզի կառավարության և ՀՀ Գեղարքունիքի մարզի աշխատակազմի միջև պայմանավորվածություն է ձեռքբերվել՝ առևտրատնտեսական, գիտատեխնիկական, բնապահպանական, հումանիտար, մշակութային և այլ ոլորտներում միջազգային և արտաքին տնտեսական կապերի իրագործման մասին» համաձայնագրի նախագիծը կյանքի կոչելու համար: Աշխատանքներ են իրականացվել Երևանում Հայ-ռուսական միջտարածաշրջանային 7-րդ համաժողովի կազմակերպման համար: Ֆրանկաֆոնիայի գագաթաժողովին պատշաճ մասնակցություն ունենալու համար Գեղարքունիքի մարզը կազմակերպիչների կողմից արժանացել է շնորհակալագրի: Հոկտեմբերի 17-19-ը մարզը մասնակցել է հայ-ռուսական միջտարածաշրջանային EXPO-RUSSIA ARMENIA ցուցահանդեսին:

2018 թվականի նոյեմբերի 9-ին Գեղարքունիքի մարզպետարանի և <<ԴԻ-ՎԻ-ՎԻ Ինթերնեյշնալ>> Հայաստանյան մասնաճյուղի միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ ԵՄ ֆինանսավորմամբ եռամյա ծրագիրը իրականացնելու նպատակով: Ծրագրի հիմնական նպատակն է աջակցել մարզի ներառական և կայուն սոցիալ-տնտեսական զարգացմանը խթանելու համայնքային զբոսաշրջության զարգացմանը:

Մարզպետարանի և այլ կազմակերպությունների համագործակցությամբ մարզի մի շարք համայնքներում իրականացվել է զբոսաշրջության զարգացման ծրագրեր: Սևանի զբոսաշրջության տեղեկատվական գրասենյակի փոխանցմամբ՝ 2018 թվականին աշխարհի 35 երկրներից 131 հազար 229 զբոսաշրջիկ է այցելել Սևանա թերակղզի:

Նախապատրաստական աշխատանքներ են տարվում «Իմ քայլը հանուն Գեղարքունիքի մարզի» ներդրումային համաժողովի կազմակերպման ուղղությամբ:

Մարզի բոլոր համայնքները ստացել են ներդրումային համաժողովի կազմակերպման աշխատանքներ իրականացնելու նպատակով արտերկրում իրենց համայնքներից բնակվող գործարարների մասնակցությունը ապահովելու շրջաբերական: Արդեն արտերկրից ստացվում են նախնական համաձայնություններ: Համաժողովը, ըստ նախնական պայմանավորվածության, տեղի

կունենա 2019 թվականի ապրիլի 19-ին, ժամը 12-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի վարչական շենքում: Հավաքագրել է մարզի բոլոր համայնքներում հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները, ինչպես նաև՝ մարզի բոլոր համայնքների կողմից 2013-2018 թվականներին իրականացված ծրագրերը:

Ներքին առողիտի ոլորտում հաշվետու ժամանակահատվածում խորհրդատվական ծառայություն է մատուցվել մարզի առողջապահական հաստատություններին, Սարուխանի բուժամբուլատորիայում անցկացվել է առողիտ 2015-2018 թվականների գործունեության վերաբերյալ: Մարտունու ՄԱՏԳ-ում կատարվել է 2016-2018 թվականների գործունեության ուսումնասիրություն: Կազմվել է 2019 թվականի առողիտի տարեկան ծրագիրը:

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի ոլորտում հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքի և մարզպետարանի ֆեյսբուքյան պաշտոնական էջի միջոցով իրականացվել է նկատելի աշխատանք՝ Գեղարքունիքի մարզպետի և մարզպետարանի աշխատանքային գործունեության, մարզպետի՝ մարզի համայնքներ կատարած աշխատանքային այցերի լուսաբանման, մարզի համայնքներում պետական և տեղական միջոցներով իրականացված սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների կարգավորման, մշակութային ծրագրերի գործունեության և դրանց լուսաբանման, մարզպետարանի, դրա ենթակայությամբ գործող կրթամշակութային և առողջապահական հիմնարկների գործունեության թափանցիկության և հրապարակայնության ապահովման ուղղությամբ: Մարզպետարանի պաշտոնական կայքի, ֆեյսբուքյան էջի, մարզում գործող տարբեր ՁԼՄ-ների միջոցով ապահովվել է մարզպետարանում և մարզային ենթակայության կառույցներում առաջացած թափուր պաշտոնների վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքներ, հրապարակվել տեղեկատվություն համայնքների ավագանիների նիստերի անցկացման ժամկետների վերաբերյալ, տեղադրվել մարզի համայնքների կողմից մարզպետարան ներկայացրած ավագանիների նիստերի արդյունքում կայացրած որոշումները: Գրեթե ամենօրյա աշխատանք է իրականացվել Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայք էջի «Նորություններ» և «Առցանց հեռարձակում» բաժիններում, որի միջոցով տեղադրվել են տպագիր և տեսանյութեր, կապված մարզի կենսագործունեության, մարզպետի և մարզպետարանի գործունեության հրապարակայնության հետ:

Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքէջում, պարբերաբար, պահանջվող տեղեկատվությամբ թարմացվել է մարզպետի կողմից ընդունած որոշումների և կարգադրությունների, մարզային ենթակայության հիմնարկներում առաջացած թափուր պաշտոնների վերաբերյալ հայտարարությունների և կայացած մրցույթների արդյունքների, քաղաքացիների ընդունելությունների, ՁԼՄ-ների, հասարակական կազմակերպությունների և անհատ քաղաքացիների կողմից տեղեկատվություն ստանալու նպատակով մարզպետարան ուղղված հարցումների, համայնքների բյուջեների ամսական կատարողականների, դրանց եռամսյակային ծախսերի, մարզի համայնքներում իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման, պետության կողմից մարզի համայնքներում իրականացվող հրատապ և սուբվենցիոն ծրագրերի, ընտանեկան նպաստի և եռամսյակային օգնության վճարման ցուցակների հրապարակման, պաշտոնական կայքում առկա և թարմացում պահանջող այլ բաժինները:

2018 թվականի հոկտեմբերի 10-ից բաժնի կողմից իրականացվում է նաև Գեղարքունիքի մարզպետարանի ֆեյսբուքյան էջի տեղեկատվական սպասարկումը:

Հաշվետու ժամանակահատվածում բաժնի աշխատակիցները մասնակցել, տեսանկարահանել և լուսանկարել են Գեղարքունիքի մարզպետի՝ մարզի համայնքներ կատարած աշխատանքային այցերը, պատրաստել և հրապարակման են տրամադրել, մարզի կենսագործունեության ոլորտում առկա հիմնախնդիրների լուծմանը, ինչպես նաև ընթացիկ այլ թեմաներին վերաբերող նյութեր:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքի միջոցով հրապարակվել է տեղեկատվական բնույթի 275 տպագիր նյութ, իսկ նույն էջով և մարզային հեռուստաընկերությունների հետ ունեցած համագործակցության արդյունքում թողարկվել է 138 տեսանյութ:

Հաշվետու ժամանակահատվածում բաժնին համագործակցել է նաև մարզային՝ «Գեղամա աշխարհ» թերթի և «Արմենպրես» լրատվական գործակալության հետ: Արդյունքում, տարվա ընթացքում հրատարակվել է թերթի 36 համար, իսկ «Արմենպրես»-ով թողարկվել մարզային բնույթի 800 տեղեկատվական նյութ:

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի աշխատակիցները իրենց լիազորությունների շրջանակներում սահմանված կարգով աջակցել և մասնակցել են մարզպետարանի ներքին փաստաթղթաշրջանառության աշխատանքների կազմակերպման և իրականացման, մասնակցություն ունեցել Գեղարքունիքի մարզի գործունեության ծրագրի կազմման աշխատանքներին:

Զորահավաքային նախապատրաստության ոլորտում ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում անցկացվել են 3 շտաբային մարզումներ՝ այդ թվում ցուցադրական մարզումներ՝ ներգրավելով ՀՀ բոլոր նախարարությունների, գերատեսչությունների և մարզպետարանների ներկայացուցիչներին: Արդյունքները ներկայացվել ՀՀ պաշտպանության նախարարություն: Ներկայացվել է 2019 թվականի շտաբային մարզումների ժամանակացույցը: Շտաբային մարզումները ՀՀ ՊՆ ներկայացուցիչների կողմից ստացել են բարձր գնահատական: Ակտիվ մասնակցություն է ցուցաբերվել «ՇԱՆԹ-2018» ռազմավարական հրամանատարաշտաբային զորավարժությանը և ստացել դրական գնահատական: ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված նոր մեթոդաբանությամբ մշակվել և հաստատվել է Գեղարքունիքի մարզպետարանի ստորաբաժանումների, 5000 և ավել բնակչություն ունեցող համայնքների և զորահավաքային առաջադրանք ունեցող կազմակերպությունների՝ խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի անցման պլանները, ըստ անհրաժեշտության փոփոխություններ են կատարվել մարզի զորահավաքային մարմնի կազմում, ինչպես նաև թարմացվել և ճշգրտվել են մարզի և համայնքների զորահավաքային պլանները:

Պաշտպանության բնագավառի իրավական ակտերի պահանջների կատարման նպատակով վարչական վերահսկողություն է իրականացվել մարզի համայնքներում, որոնցում արձանագրված բացթողումները կամ լրացվել են տեղում կամ տրվել են ժամկետներ՝ դրանք շտկելու ուղղությամբ:

Համայնքների ղեկավարների հետ աշխատանքներ են տարվել՝ զինկոմիսարիատների հետ կապը ակտիվացնելու ուղղությամբ, զինապարտների հաշվառման գործընթացը ըստ

պատշաճի կազմակերպելու համար: Զինվորական կոմիսարիատների հայտերի համաձայն տրամադրվել են շենքեր, շինություններ և տարածքներ, զինապարտների և տեխնիկայի նախնական հավաքակետեր ծավալելու նպատակով, ինչպես նաև հաստատվել են զինվորական կոմիսարիատների կողմից գորահավաքային միջոցառումների ծրագրերը:

Հաշվառման լրիվությունն ապահովելու նպատակով կազմվել և մարզի ու Հայաստանի հանրապետության այլ զինվորական կոմիսարիատներ են ներկայացվել Գեղարքունիքի մարզպետարանի զինապարտ աշխատակիցների ցուցակները՝ ըստ հաշվառման վայրի:

Մարզի զինվորական կոմիսարիատների հետ սահմանված կարգով իրականացվել են մարզպետարանի և ենթակա կազմակերպությունների աշխատակիցների ամրագրման աշխատանքները:

Գեղարքունիքի մարզպետի համապատասխան որոշումներով կազմակերպվել են 2018թ. ամառային զորակոչի հետ կապված աշխատանքները: 2018թ. ամառային զորակոչի առաջադրանքը կատարվել է 107.6 տոկոսով: Անցկացվել է մարզային զորակոչային հանձնաժողովի 4 նիստ: Հսկողություն է սահմանվել մարզի տարածքում այլընտրանքային աշխատանքային ծառայողների աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: Կազմվել և ՀՀ ԱԻ նախարարություն է ներկայացվել Գեղարքունիքի մարզպետարանի, ենթակա կազմակերպությունների, համայնքապետարանների և նախադպրոցական հաստատությունների ներկայացուցիչների ցանկերը՝ ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման ակադեմիայում 2018թ. վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար: Հսկողություն է իրականացվել նրանց մասնակցությունը ապահովելու համար:

Նոր տարվա կապակցությամբ մարզպետի կողմից դրամական աջակցություն են ստացել 2016-2018 թթ. զոհված և 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմում վիրավորված զինծառայողների ընտանիքները, հայոց բանակում նույն ընտանիքից մեկից ավելի զինծառայող ունեցող ընտանիքները, ինչպես նաև սննդի աջակցություն է արվել Գեղարքունիքի մարզի զորամասերին:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում

համագործակցված ախատանք է տարվել մարզի համայնքների խնամակալության և հոգաբարձության մարմինների հետ: 2018թ հայտնաբերվել և հաշվառվել է առանց ծնողական խնամքի մնացած 4 երեխա: Մարզում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների ընդհանուր թիվը կազմում է 436 երեխա: 2018թ. կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված 7 երեխաներ վկայագրվել են հանրապետության տարբեր հատուկ դպրոցներում, իսկ 41 երեխայի տրվել են վկայագրեր՝ իրենց կրթությունը շարունակելու ներառական կրթությամբ: Գավառի մանկատանը խնամվում են 50 երեխաներ: 2018թ. մանկատանից կենսաբանական ընտանիքներ են տեղափոխվել 4 երեխաներ:

ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության կողմից ներկայացված տվյալների հիման վրա ձևավորվել է մարզի մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ և հանցագործություն կատարած անչափահասներին վերաբերող մարզային շտեմարան, որտեղ 2018թ. հաշվառված է 13 անչափահաս իրավախախտ երեխա:

2010թ. Մարտից, համագործակցելով «Նորք» տեղեկատվական - վերլուծական կենտրոնի հետ, կատարվում է մարզի տարածքում հայտնաբերված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառում և մուտքագրում:

2018թ. հաշվառվել և մուտքագրվել է 38 երեխա, իսկ հաշվառման բազայից դուրս է հանվել 6 երեխա: 2018թ. որպես որդեգրման ենթակա երեխաներ կենտրոնացված հաշվառման են վերցվել 6 երեխաներ, իսկ որպես որդեգրել ցանկացող անձ կենտրոնացված հաշվառման են վերցվել 8 որդեգրողի թեկնածուներ:

Մշակվել է ՀՀ Գեղարքունիքի մարզում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021թվականների ռազմավարական ծրագրերի իրականացման միջոցառումների պլան և ՀՀ Գեղարքունիքի մարզում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության իրականացման 2017-2021թվականների միջոցառումների ծրագիր: Բաժնում կատարվել է մոտ 74 քաղաքացիների դիմումների ընդունում, որի ընթացքում տրվել են համապատասխան ընթացք, ցուցումներ և խորհրդատվություններ տարբեր հարցերի շուրջ՝ սոցիալական, հոգեբանական, մանկավարժական, իրավաբանական: Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա և ամանորյա տոների կապակցությամբ կազմակերպվել են այցելություններ Գավառի մանկատուն:

Դիմում-բողոքների և քաղաքացիների ընդունելության ոլորտում 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմ է մուտքագրվել 3037 դիմում, որից 612-ը վերահասցեագրվել է վերադաս պետական մարմիններից, այդ թվում 510-ը՝ ՀՀ վարչապետի աշխատակազմից:

Քաղաքացիների ընդունելությունը ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանում կազմակերպվել է յուրաքանչյուր ամսվա 2-րդ շաբաթվա երեքշաբթի օրը, իսկ յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթվա երեքշաբթի օրը՝ մարզի Սևանի, Մարտունու, Վարդենիսի և Ճամբարակի տարածաշրջաններում:

Հաշվետու ժամանակամիջոցում ՀՀ Գեղարքունիքի մարզպետի կողմից կատարվել է 507 քաղաքացիների ընդունելություն, որից 370-ը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանում, 11-ը՝ Մարտունու, 17-ը՝ Սևանի, 20-ը՝ Վարդենիսի և 89 -ը՝ Ճամբարակի տարածաշրջաններում: Առցանց համակարգով մարզպետարանի աշխատակազմ է մուտքագրվել 17036 գրություն և ելից է արվել 7960 փաստաթուղթ: 2018 թվականին մարզպետը ընդունել է 355 անհատական որոշում և արձակել է 383 կարգադրություն: 2018 թվականի ընթացքում կազմվել է Գեղարքունիքի մարզի խորհրդի 2 նիստերի եւ Գեղարքունիքի մարզպետի մոտ կայացած 19 խորհրդակցությունների արձանագրությունները եւ դրանք տրվել հասցեատերերին:

